



**ՍՈՒՍԱՆՆԱ ՉԱՆԱԲՅԱՆ**

*ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ,  
բանասիրական գիտությունների թեկնածու*

**ՓՈՒՍԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ**

*Հոդվածում ուսումնասիրվում է տնտեսագիտական գրականության մեջ փոխաբերության օգտագործումը՝ կիրառելով Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի (1980 թ.) առաջարկած ժամանակակից տեսությունը: Փոխաբերությունը շատ հաճախ է օգտագործվում տնտեսագիտության մեջ, քանի որ այն օգնում է վերացական երևույթները (թիրախային տիրույթ) հասկանալ այլ, կոնկրետ երևույթների միջոցով (ելակետային տիրույթ): Առաջարկվում է վերացական տնտեսագիտական գաղափարներին առնչվող հասկացության փոխաբերությունների ճանաչողական վերլուծություն: Փոխաբերական արտահայտություններն ընտրվել են և դասակարգվել՝ ելնելով իրենց ելակետային տիրույթներից: Քննարկվում են նաև այդ արտահայտությունների անգլերենից հայերեն կատարվող թարգմանությունների որոշ հարցեր:*

*Հիմնաբառեր. փոխաբերություն, հասկացության փոխաբերություններ, տնտեսագիտություն, ելակետային տիրույթ, թիրախային տիրույթ, թարգմանության մեթոդներ*

JEL: A2, A20

**Փոխաբերություն** երևույթը ավելի քան երկու հազարամյակ շարունակում է մնալ փիլիսոփաների և տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Դեռ անտիկ շրջանում Արիստոտելն ասում էր. «Ամենից կարևորն է հմտորեն օգտվել մետաֆորներից: Պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել էի կարելի: Այն իսկապես տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է բնության մեջ նկատել առարկաների նմա-

*նությունը*»<sup>1</sup> Սակայն 20-րդ դարի վերջում փոխաբերության ուսումնասիրությունը բնութագրվում է որակապես նոր մակարդակի անցումով: Գիտնականների ուշադրության կենտրոնում փոխաբերության ոճաբանական հայեցակերպին փոխարինում են դրա ճանաչողական և իմաստային գործառնություններն ու հնարավորությունները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փոխաբերությունը լայնորեն կիրառվում է ոչ միայն գեղարվեստական ոճում, այլև հրապարակախոսական, խոսակցական և գիտական ոճերում: Այսպես, ժամանակակից լեզվաբանության տեսանկյունից փոխաբերությունը հանդես է գալիս ոչ միայն որպես հարուստ, գունեղ խոսք ստեղծելու հնար, այլև որպես իմաստային նոր կառույցներ կերտելու և հաղորդակցումն ավելի արդյունավետ դարձնելու միջոց: Մեր ժամանակներում փոխաբերությունն օգնում է մարդուն իր գիտահետազոտական, ճանաչողական գործունեության մեջ և խթանում կիրառական լեզվաբանության զարգացումը: Փոխաբերականացման հիմքի վրա ստեղծված տերմինները (բառեզր, եզրույթ) առավել կենսունակ են, քանի որ փոխաբերության ինքնին պարունակում է ազգային մտածողության մեջ ամրագրված իմաստային նրբերանգներ: Փոխաբերականացման արդյունքում տերմինաբանական գործառնությունն ձեռք բերած լեզվաբանական միավորները դառնում են համապատասխան տերմինաբանական համակարգի տարրեր և տվյալ տերմինահամակարգի միավորների հետ մտնում են իմաստային և ձևաբանական նոր հարաբերությունների մեջ:

Մեր դեպքում՝ տնտեսագիտության մեջ, տերմինաստեղծման փոխաբերական միջոցը եղել և մնում է չափազանց կենսունակ, քանի որ տնտեսագիտության բնագավառը, մասնավորապես՝ նոր միավորներով այն պարբերաբար համալրելու պահանջը և գիտական հասկացություններն անվանելու համար տերմինաբանական նոր միավորների ստեղծման անհրաժեշտությունը ներկայանում են իբրև անսահմանափակ գործընթացներ:

Հայտնի է, որ փոխաբերությունը ձևավորվում է սովորականի և անսովորի միջև գոյություն ունեցող հակադրության հիման վրա, որի արդյունքում փոխաբերական իմաստով գործածված բառը հայտնվում է ոչ սովորական համատեքստում: Եթե մարդը, հիմնվելով որոշակի լեզվաբանական ավանդույթի վրա, օգտագործում է հնչյուններ, բառեր՝ ընդունված համատեքստում, ապա խոսքի փոխաբերական ընկալումը տեղի է ունենում ավանդույթից հեռանալու դեպքում: Նման հարցերով զբաղվող լեզվաբանները *փոխաբերություն* տերմինի կիրառման համատեքստի ընդլայնումը ուղղակիորեն կապում են լեզվի մասին գիտության մեջ մարդակենտրոն հարացույցի երևան գալու հետ:

Մարդու և աշխարհի միջև կանգնած է լեզուն, մի երևույթ, որը հանգեցնում է տարբեր տեսակի նմանությունների հայտնվելուն՝ ստեղծվելով կենդանի փորձի համանմանությամբ, գոյություն ունեցող նմանությունների և տարբերությունների արդյունքում: Նոր գիտական փոխաբերությունները աշխուժացնում են մեռած, դասական լեզուներից փոխառված հասկացությունները՝ արդյունքում ստեղծելով նոր բառեր և տերմիններ: Ահավասիկ, 18-րդ դարում *Ա. Սմիթը*՝ ժամանակակից տնտեսագիտության հիմնադիրը, առաջ քաշեց «անտեսանելի ձեռքի» (the invisible hand) գաղափարը: Տնտեսագիտության մեջ հավանաբար դա փոխաբերության օգտագործման ամենաառաջին դեպքն էր: Նա բացատրում էր, թե ինչպես է շուկայի «անտեսանելի ձեռ-

<sup>1</sup> Արխստոնել, en.wikipedia.org/wiki/Metaphor:

քը» վարպետորեն կարգավորում գները, որպեսզի հմտորեն բաշխի առկա սակավ ռեսուրսները՝ դրանք համապատասխանեցնելով գոյություն ունեցող սպառողական նախապատվություններին և արտադրական ծախսերին:

1982 թ. հայտնի տնտեսագետ Ու. Հենդերսոնը իր «Փոխաբերություն և տնտեսագիտություն» (Metaphor and Economics) գրքում տեսականորեն քննարկում է փոխաբերության օգտագործումը տնտեսագիտական տեքստերում: Այնուհետև Դ. Մակքլոսկին իր «Տնտեսագիտության ճարտասանություն» (The Rhetoric of Economics) գրքում կարևորում է փոխաբերության օգտագործման նշանակությունը տնտեսական համատեքստում: Մակքլոսկին նշում է, որ տնտեսագիտությունն իր բնույթով փոխաբերական է: Նա դիտարկում է փոխաբերությունը որպես տնտեսագիտական ճարտասանության ամենակարևոր օրինակ, որն էական է տնտեսական մտածելակերպի համար: Նա մասնավորապես նշում է. «Ասել, որ շուկաները ներկայացված են առաջարկի և պահանջարկի կորով, նվազ փոխաբերական չէ, քան ասել, որ արևմտյան քամին աշնան շունչն է»: <sup>2</sup> Նա նաև նշում է, որ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական հաշվարկներն ու բացատրությունները, տնտեսական մոդելավորումը փոխաբերական են: Նույնիսկ գծագրերում և դիագրամներում պատկերված գծերը, կետերը, կորերը փոխաբերականորեն են ներկայացնում տնտեսությունն ու տնտեսական փոփոխականները: Նա եզրակացնում է, որ տնտեսագիտությունը հագեցած է փոխաբերություններով, և դա արդեն փորձով հաստատված իրողություն է: Փ. Քրուզմանը նույնպես նշում է, որ տնտեսագիտական գաղափարներն արտահայտելիս փոխաբերությունը գյուտական (էուրիստական) դեր է կատարում տնտեսագիտության մոդելավորման մեջ: <sup>3</sup> Բ. Բիքչիերին նշում է, թե ինչպես արտադրության, շրջանառության և բարիքների բաշխման հարաբերությունները կարող են ներկայացվել մարդու մարմնի մասերի միջև գոյություն ունեցող հարաբերություններով: Նա ենթադրում է, որ «դրամի շրջանառություն» (circulation of money) արտահայտությունը երևան է եկել Վ. Հարվեյի «արյան շրջանառության» բացահայտումից հետո <sup>4</sup>:

Ա. Մարշալը առաջին տնտեսագետն էր, որ կենսաբանական երևույթները փոխաբերականորեն օգտագործեց տնտեսության վիճակը նկարագրելիս: Նա բիզնեսի զարգացումը վերլուծում էր՝ համեմատելով այն կենդանի օրգանիզմի աճի, փոփոխությունների և փտման հետ <sup>5</sup>: Փ. Օրմերոդը կարծում է, որ 19-րդ դարում տնտեսության դիտարկումը որպես մեքենա, սարքավորում արդյունք է վիկտորիական ժամանակաշրջանում բնական գիտությունների զարգացման, որը հանգեցրեց աշխարհի և մասնավորապես տնտեսության մեխանիստական պատկերացման առաջացմանը <sup>6</sup>:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ինչպես լեզվաբանները, այնպես էլ տնտեսագետները ուսումնասիրել են փոխաբերության օգտագործումը տնտեսագիտական համատեքստերում: Իրենց աշխատանքներում նրանք

<sup>2</sup> "To say that markets are represented by supply and demand "curve" is no less a metaphor than to say that the west wind is the "breath of autumn being". (McCloskey, The Rhetoric of Economics, Economic Literature XXI, 1983, p.502).

<sup>3</sup> Տե՛ս **Krugman P.**, Development, Geography and Economic Theory, London, Cambridge MA, 1995

<sup>4</sup> Տե՛ս **Bicchieri C.**, Should a Scientist Abstain from Metaphor? Cambridge, Cambridge University Press, 1988:

<sup>5</sup> Տե՛ս **Marshall A.**, The Principle of Economics, London, Macmillan and Co.Ltd., 1920, էջ 56:

<sup>6</sup> Տե՛ս **Ormerod P.**, The Death of Economics, Wiley John & Sons, London: Father and Faber, 1997:

բոլորն էլ համամիտ են, որ փոխաբերությունը նշանակալից դեր է խաղում վերացական տնտեսագիտական տեսությունները և բարդ տնտեսական երևույթները հասկանալու համար:

Տնտեսագիտության մեջ օգտագործվող փոխաբերությունները կարող են արդեն խորապես հաստատված լինել մարդկանց մտածողության մեջ՝ ձևավորելով հասկացութային կառուցվածքի (conceptual framework) բաղկացուցիչը: Այնպիսի տնտեսագիտական փոխաբերություններ, ինչպիսիք են՝ **աշխատողները մարդկային կապիտալ են** (employees are human capital), **արժեթղթերի ինդեքսներն ընկնում են** (equity indexes fall), բաժնետոմսերի գնի վերականգնում (the rebound in stocks), **իրացվելի ակտիվներ** (liquid assets), արդեն աստիճանաբար ներթափանցել են մարդկանց մտածելակերպ:

Մասնագիտական, տնտեսագիտական բառարանները տալիս են cash flow՝ **կանխիկ դրամի հոսք** տերմինի սահմանումը՝ չնչելով ոչ մի հոմանիշ: Սա վկայում է այն մասին, որ չկա որևէ այլ պայմանական միջոց այս հասկացությունն արտահայտելու համար, և փոխաբերությունն է լրացնում տնտեսագիտության տերմինաբանական համակարգում գոյություն ունեցող այս բացը:

Մարդիկ աշխարհը ճանաչում են՝ իրենց կենսափորձի վրա հիմնվելով: Առօրյա կյանքում նրանք հասկանում են բարդ և անըմբռնելի գաղափարներն ու տեսությունները՝ վկայակոչելով իրենց շրջապատող տեսանելի, ըմբռնելի, իրականության մեջ գոյություն ունեցող իրերն ու գաղափարները: Սա նշանակում է, որ որոշակի երևույթների ըմբռնումը տեղի է ունենում այլ տիրույթներում գտնվող երևույթների օգնությամբ: Տարբեր տիրույթների հարաբերականացումը իրականացվում է փոխաբերության մեխանիզմի միջոցով: Փոխաբերությունն ինքնին նոր գաղափարներ առաջ չի քաշում, սակայն այն օժանդակում է, որ աղոտն ու անորոշը դառնան թափանցիկ և ըմբռնելի:

*Ջ. Լակոֆը և Մ. Ջոնսոնը* անգլերենում առանձնացրել են հասկացութային փոխաբերությունների մի համակարգ, որը հիմնված է այս կամ այն նշանակությամբ օբյեկտների վրա<sup>7</sup>: Հասկացութային փոխաբերությունները ելակետային (source domain) և թիրախային (target domain) տիրույթների միջև կայուն համապատասխանություններ են, որոնք հաստատվել են հասարակության ներսում գոյություն ունեցող լեզվական և մշակութային ավանդույթների շնորհիվ<sup>8</sup>: Նման համապատասխանությունները արտասահմանյան լեզվաբանության մեջ հաճախ կոչվում են «արտապատկերում» (mapping): Վերջինս թույլ է տալիս թիրախային տիրույթի մասին դատել՝ օգտվելով ելակետային տիրույթի մասին արդեն գոյություն ունեցող դատողություններից: Հետևաբար, ինչպես նշում է *Ջ. Քովեցեսը*, փոխաբերությունը, փաստորեն, հասկացութային տիրույթներում առկա արտապատկերումների մի շղթա է<sup>9</sup>:

Ճանաչողական լեզվաբանության մեջ առանձնացնում են փոխաբերությունների երեք տեսակ՝ կողմնորոշող (orientational), կառուցվածքային (structural), գոյաբանական (ontological)<sup>10</sup>:

**Կողմնորոշող փոխաբերությունն** օգտագործվում է, երբ ելակետային տիրույթի պարզ, տարածական կառույցը արտապատկերվում է բարդ, ոչ

<sup>7</sup> Տե՛ս **Lakoff G., Johnson M.**, *Metaphors We Live By*, Chicago, University of Chicago Press, 2003, էջ 117-118:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 14:

<sup>9</sup> Տե՛ս **Kovecses Z.**, *Metaphor: A Practical Introduction*, Oxford< Oxford University Press, 2000, էջ 24:

<sup>10</sup> Տե՛ս **Lakoff G., Johnson M.**, *Metaphors We Live By*, Chicago University of Chicago Press, 1980:

տարածական կառույցում: Նման փոխաբերությունները հիմնականում կապված են վերև-ներքև, առաջ-հետ, ներս-դուրս և այլ կողմնորոշիչների հետ, որոնք լայնորեն օգտագործվում են վերացական գաղափարները հասկանալու համար: Օրինակ՝

- Happy is up; Sad is down.
- Conscious is up; Unconscious is down.
- More is up; Less is down.
- High status is up; Low status is down.

Այստեղ happy, conscious, more, high status բառերը դրական իմաստ ունեն և կապված են «վերև» կողմնորոշիչի հետ, մինչդեռ sad, unconscious, less, low status բառերը բացասական են դիտվում՝ կապված «ներքև» կողմնորոշիչի հետ<sup>11</sup>:

**Կառուցվածքային փոխաբերության** դեպքում վերացական, ոչ շոշափելի թիրախային տիրույթը հասկանալի է դառնում կոնկրետ, շոշափելի ելակետային տիրույթի կառուցվածքի միջոցով: Վերցնենք Time is a resource (ժամանակը ռեսուրս է) փոխաբերությունը, որտեղ մարդիկ անշոշափելի «ժամանակը» իմաստավորում են շոշափելի, իրենից արժեք ներկայացնող «ռեսուրսի» միջոցով:

**Գոյաբանական փոխաբերությունների** դեպքում կոնկրետ երևույթը արտապատկերվում է ոչ կոնկրետ, վերացական երևույթի միջոցով: Անձնավորումը գոյաբանական փոխաբերության ձև է, որտեղ մարդկային հատկանիշները փոխանցվում են ոչ մարդկային երևույթներին: Inflation devours our profit (Ինֆլյացիան խժռում է մեր շահույթը). ինֆլյացիան մարդ չէ, սակայն նրան վերագրվում է մարդու՝ ուտելու, այն էլ՝ ազահաբար ուտելու հատկանիշը: Այստեղ անձնավորումն օգտագործում է մեր ունեցած ամենալավ ելակետային տիրույթներից մեկը՝ մեզ: Համաձայն Ջ. Քովեչեսի՝ մարդկանց միջոցով ոչ մարդկանց անձնավորելով՝ մենք կարող ենք այդ գաղափարները ավելի լավ հասկանալ<sup>12</sup>:

Աշխատանքում վերլուծության են ենթարկվում ՀՊՏՀ-ում «Մասնագիտական օտար լեզու» դասընթացի մեջ ընդգրկված ձեռնարկներում (Ս. Չալաբյան, Գ. Վարդանյան - Economics, 2005 թ., Ս. Չալաբյան, Գ. Վարդանյան - Finance, 2013 թ., Ս. Չալաբյան – Global Marketing, 2015 թ., Ս. Չալաբյան, Լ. Հարությունյան, Ա. Գրիգորյան - Economics, 2016 թ., Ս. Չալաբյան, Ա. Գրիգորյան – English for Managers, 2018 թ.), ինչպես նաև The Economist և Financial Times պարբերականներում տեղ գտած փոխաբերական իմաստով օգտագործված արտահայտությունները:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել անգլերենի տնտեսագիտության դիսկուրսում (խոսույթում) փոխաբերության օգտագործումը՝ կիրառելով Ջ. Լակոֆի և Ս. Ջոնսոնի, ինչպես նաև այլ լեզվաբանների՝ Բ. Ջուի<sup>13</sup>, Ա. Փամիսի<sup>14</sup>, Ֆ.-Է. Քարդինի<sup>15</sup>, Ս. Վ. Մելնիչուկի և Վ. Ս. Օսիպովայի<sup>16</sup> կողմից առա-

<sup>11</sup> Տե՛ս, **Lakoff G., Johnson M.**, Metaphor We Live By, Chicago University of Chicago Press, 1980, էջ 23:  
<sup>12</sup> Տե՛ս **Kovecses Z.**, Metaphor: A Practical Introduction, Oxford, Oxford University Press, 2000, էջ 23:  
<sup>13</sup> Տե՛ս **Jue X.**, Economic Metaphors in English Newspapers, Kristianstad University College, The School of Teacher Education/English, 2009:  
<sup>14</sup> Տե՛ս **Pamies A. & Ruiz R.**, Metaphors of Economy and Economy of Metaphors, University of Granada, Spain, 2017:

ջադրված հասկացության փոխաբերության տեսությունը և հետազոտել, թե ինչպես են փոխաբերական իմաստ ունեցող արտահայտություններն օգտագործվում տնտեսագիտության տարբեր համատեքստերում՝ ստեղծելով նորանոր տերմիններ, որոնց զգալի մասը հիմնված է փոխաբերության վրա, որն էլ իր հերթին կապված է լեզվական այլաբանությունների, ոճական ձևերի հետ և կարևոր, հաղորդակցական դեր է խաղում մասնագիտական տեղեկույթի փոխանցման ընթացքում: Տնտեսագիտական բնագիր տեքստերից վերցված օրինակները ցույց են տալիս, թե ինչպես է փոխաբերականացումը օգտագործվում տնտեսական իրույթների հասկացության դաշտի ձևավորման ընթացքում: Տնտեսագիտության մեջ ամենատարածված հասկացության փոխաբերությունները, կախված ելակետային տիրույթներից, այսինքն՝ գոյություն ունեցող հարաբերությունների վեկտորից, կարելի է խմբավորել հետևյալ հիմնական կադապարների մեջ:

1. Economy is a human body (Տնտեսությունը մարդկային օրգանիզմ է:) – the heart of global economy, the backbone of the economy, market power, supply behavior, financial markets tremble, the misery of manufacturing, to realize market's decision, to be at the mercy of the marketplace, market power, healthy economy, no remedy will be enough for the economy, to cause headache for the economy, in the pursuit of a cure for the country's economic illnesses, weak economy, healthy growth, product life circle, mature economy, political and economic myopia, ... the European Central Bank is only in its infancy և այլն: Economy and human body կադապարը հանդես է գալիս որպես ելակետային տիրույթ՝ նկարագրելով մարդկային օրգանիզմի գործունեությունը: Տնտեսությունը ներկայանում է որպես կենդանի օրգանիզմ՝ իր մեջ տեղի ունեցող փոփոխություններով, հիվանդություններով, առողջացման գործընթացներով: Այդ խմբին պատկանող փոխաբերականորեն օգտագործված արտահայտություններում «տնտեսություն», «շուկա/շուկայատեղի» բառերն անձնավորված են՝ դրսևորելով մարդուն, նրա օրգանիզմին բնորոշ հատկանիշներ:
2. Economy & Zoology (տնտեսություն և կենդանաբանություն) – monetary/currency snake (եվրոպական արժույթային համակարգ՝ ստեղծված 1979 թ., որի մեջ միավորվեցին շատ եվրոպական երկրներ՝ իրենց ազգային արժույթների տատանումները, 2,25%-ից ավելի լինելու դեպքում, պահպանելու համար), a shark watcher (բիզնես խորհրդատու, որն օգնում է ընկերություններին՝ բացահայտել և կանխել անցանկալի կլանումները), galloping inflation, the financial flames engulfed the banks, vulture fund (անզղ ֆոնդ՝ ներդրումային ֆոնդ, որը ցածր գներով գնում է ընկերությունների բաժնետոմսերը՝ հետագայում ավելի բարձր գներով վաճառելու, հետևաբար՝ շահույթ ստանալու համար), bear, bull, stag և այլն: Այս կադապարի մեջ ընդգրկված փոխաբերությունների խմբին վերագրվում են կենդանիներին բնորոշ հատկանիշներ (օրինակ՝ to engulf նշանակում է «լափել, խժռել, կուլ տալ», գործողություն, որը բնորոշ է կենդանիներին): Բոր-

<sup>15</sup> Տե՛ս **Cardini F.-E.**, *Analysing English Metaphors of the Economic Crisis*, University of Genoa, 2014:

<sup>16</sup> Տե՛ս **Мельничук М.В., Осипова В.М.**, *Метафора в англоязычном бизнес-дискурсе*, Научный диалог, N11 (47), 2015, էջ 31-41:

սայում գործող միջնորդներին անվանում են bears` «արջեր», որոնք աշխատում են գների անկման վրա (արջը թաթի հարվածով է զոհին տապալում գետնին), bulls` «ցուլեր», որոնք հետաքրքրված են գների բարձրացմամբ (ցուլը իր պոզերով է հարձակվում` թշնամուն վեր բարձրացնելով), stags` «արու եղջերուներ», որոնք բորսայում արագ գնում և վերավաճառում են նոր ի հայտ եկած ընկերությունների բաժնետոմսերը:

3. Economy & Botany (տնտեսություն և բուսաբանություն) – green shoots, to ripe the fruits, economic blossoming, to reap the benefits/satisfaction, the roots of economy, the seeds of development, the branch of economy, economic fruits, the roots of poverty և այլն: Այս խմբի հասկացության փոխաբերությունների ելակետային տիրույթներում բույսերը, ծիլերը, սերմերը, մրգերն ու արմատները փոխաբերականորեն են օգտագործվում` նկարագրելու համար ազգային տնտեսությունների, տնտեսական կազմակերպությունների զարգացումը բնորոշող փուլերը` սկիզբ, ծաղկում, աճ, ավարտ: Բույսերի մասերն էլ այսպիսով համապատասխանում են բարդ տնտեսական համակարգերի մասերին (օրինակ` the branch/roots of economy): Երբ բույսը հասունանում է, այն ծաղկում է և բերք է տալիս: Ծաղկման (blossom) գաղափարը փոխանցվում է` տնտեսական առաջընթացն ու զարգացումը նկարագրելու համար, իսկ economic fruits արտահայտությունը ենթադրում է հաջող տնտեսական գործունեության դրական արդյունքներ և նվաճումներ, green shoots` «կանաչ ծիլեր» տերմինը տնտեսական անկումից, հաջողված ձեռնարկումից հետո դրական տեղաշարժ, բարելավում է բնութագրում: Համաձայն Ջ. Քովեցեսի` այստեղ փոխաբերության արտապատկերման հիմնական բաղադրիչը բույսերի վերաբերյալ մեր ունեցած հարուստ գիտելիքն է, որը վերագրվում է բարդ տնտեսական գաղափարների և համակարգերի վերացական զարգացմանը<sup>17</sup>:
4. Nature & natural catastrophes (բնություն և բնական աղետներ) – economic earthquake, to flood the market, monetary storm, devastating deflation, hurricane, to calm the storm, turbulence, flood of imports/immigrants, a wave of mergers, the credit drought և այլն: Բնության և հատկապես բնական աղետների հետ կապված փոխաբերությունների խմբում առկա է «բացասական» տարրը, որը «բնական աղետներ» ելակետային տիրույթի բացասական լինելու հատկանիշը փոխանցում է թիրախային տիրույթին` հաղորդելով նրան ճգնաժամային իրավիճակի իմաստային նրբերանգ:
5. Economy & a machine (տնտեսություն և մեքենա/սարքավորում) – price mechanism, trade balance, equilibrium, elasticity of demand, job machine, monetary flexibility, to run out of steam, to put on the brakes, to take the foot off the accelerator, sinking banks, a hard landing, to fuel the economy, a well functioning economy, ... in macroeconomics we observe that the car goes faster when the accelerator is depressed and that it slows when the brake is applied և այլն: Մեքենան իր բազմաթիվ

<sup>17</sup> Տե՛ս **Kovecses Z.**, Metaphor: A Practical Introduction, Oxford, Oxford University Press, 2000, էջ 133:



մասերով որպես ելակետային տիրույթ է ծառայում՝ հասկանալու համար թիրախային տիրույթ հանդիսացող և նույնպես բազմաթիվ մասերից բաղկացած, վերացական տնտեսական համակարգը: Այստեղ փոխաբերական հասկացութափոխումը (conceptualization) շատ ընդհանրություններ ունի տնտեսության, տնտեսական գործունեության հետ: Մարդիկ քաջածանոթ են մեքենային, նրա մասերի աշխատանքին, և այս ամբողջ առկա գիտելիքը օգնում է, որ ծանոթ առարկաների հատկանիշների հիման վրա վերացական, բարդ, տնտեսական գործընթացների ու տեսությունների ըմբռնումը դյուրանա՝ դրանք պարզ ու կառավարելի դարձնելով: Մեքենայի աշխատանքը անխափան ու կանխատեսելի է, և ընդունելով, որ «տնտեսությունը գործում է մեքենայի նման», համեմատությունը մեզ կօգնի տնտեսության, տնտեսական քաղաքականությունների վերաբերյալ դատողություններ անելիս:

6. Economy & war/sports (տնտեսություն և պատերազմ/սպորտ) – to fight inflation/poverty, ... the main battlefield at present is retail trade, to combat deflation, to attack the euro, to defeat unemployment, commercial wars, to conquer the market, financial strategy, marketing tactics, financial weapons, an army of small savers, in the battle over this deal և այլն: Տնտեսական իրություններն արտացոլող փոխաբերությունների այս խումբը հիմնված է պայքարի, ռազմական գործողությունների վրա: Երբ մենք մտածում ենք պատերազմի մասին, որպես կանոն, մեր գիտակցության մեջ հայտնվում են կռվի, ռազմադաշտի, զինվորների, զինվորական ուժերի, զորքի, զենքի, պատերազմի ռազմավարության, պատերազմի ավարտի պատկերները: Ճանաչողական առումով դրանք ելակետային տիրույթներ են, մինչդեռ թիրախային տիրույթների դերում հանդես են գալիս գործարար բանակցությունները, շուկան, գործընկերները, բիզնեսում օգտագործվող ռազմավարությունները: Այս երկու տիրույթների միջև կարող են հաստատվել հետևյալ համապատասխանությունները. բանակցությունները դիտարկվում են որպես ճակատամարտ, որի նպատակն է՝ հասնել համաձայնության և հաջող գործարք կնքել: Այստեղ բիզնեսի ներկայացուցիչները գործում են իրար վրա հարձակվող թշնամիների նման՝ պաշտպանելով իրենց դիրքերն ու շահերը: Սպորտի հետ կապված հասկացութային դաշտը կարող է պատկերավոր ձևով նկարագրել տնտեսության և բանկերի վիճակը՝ economic marathon, to own the ballpark (ballpark - բեյսբոլի դաշտ) և այլն:
7. Economy is a building (տնտեսությունը շենք/շինություն/կառույց է) – the structure of the economy, to lay the ground for a huge growth, monetary base, tax ceiling, tax floor, price stability, to destabilize the economy, to construct the market supply/demand curve, to rebuild the economy, best-designed markets և այլն: Փոխաբերությունների այս խումբը շատ հաճախ է որպես ելակետային տիրույթ օգտագործվում, քանի որ այն անհրաժեշտ է մարդու կյանքի, նրան իր նյութական պահանջմունքներից մեկով՝ ծածկով ապահովելու համար: Տնտեսական համատեքստերում «շենք/շինություն» բառերը հանգեցնում են մի շարք փոխաբերական արտահայտությունների՝ կապված շենքի կա-



ռուցվածքի և ամրության հետ: Բնական է, որ եթե շենքը լավ է կառուցված, ապա այն կայուն և ամուր կլինի, հակառակ դեպքում՝ այն կլինի երերուն և փլուզման ենթակա: Տնտեսական համակարգը նույն ձևով կցնցվի և կփլուզվի, եթե ամուր չէ: Իրական կյանքում շենքի հիմքը վճռորոշ է շենքի կայունության համար: Տնտեսության «կայունության» փոխաբերականորեն արտապատկերված այս գաղափարը բացատրում է, թե ինչու է յուրաքանչյուր երկիր կարևորում հենակետային արդյունաբերության և ենթակառուցվածքների ստեղծման հարցը, քանի որ տնտեսության և տնտեսական համակարգերի զարգացման համար ամուր, կայուն հիմք է անհրաժեշտ:

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ շուրջ յոթ տիպի ելակետային տիրույթներ են օգտագործվում տնտեսական փոխաբերությունների արտապատկերման դեպքում՝ տարբեր կողմերից նկարագրելով և լուսաբանելով տնտեսագիտության տիրույթը: Վերացական տնտեսագիտական գաղափարներն ու համակարգերը կարելի է հասկանալ մարդկանց կենսափորձից վերցված կոնկրետ գաղափարների միջոցով: Սակայն տնտեսագիտական տեքստերում փոխաբերությունը սոսկ նկարագրական և բացատրական գործառույթ չի իրականացնում, փոխարենը, ինչպես նշում են Դ. Մակքլոսկին<sup>18</sup>, Ու. Հենդերսոնը<sup>19</sup> և Ֆ. Բոերսը,<sup>20</sup> այն դարձել է տնտեսագիտական տեքստերից անբաժանելի՝ ծառայելով որպես անհրաժեշտ ճանաչողական մեխանիզմ և ձևավորելով մարդկանց հասկացության կառուցվածքի հիմնական մասը:

Փոխաբերությունների թարգմանությունը (մեր դեպքում՝ անգլերենից հայերեն) կարող է դժվարությունների հանգեցնել, թեև, շնորհիվ իրենց պատկերավոր արտահայտչականության, այդպիսիք լավ են ներկայացնում երևույթների էությունը: Դժվարությունն այն է, որ բառարաններում տրված բացատրությունները կարող են տարատեսակ լինել, և տվյալ իմաստը հասկանալու համար պետք է առաջին հերթին հիմնվել համատեքստի, ինչպես նաև մասնագիտական գրականության վրա: Լավագույն տարբերակը գոյություն ունեցող հայերեն համարժեքի ընտրությունն է, ինչպես հետևյալ օրինակներում՝ market failure - շուկայի ձախողում, floating exchange rate - լողացող փոխարժեք, to go through hard times - դժվար ժամանակներում ապրել/դժվար օրեր տեսնել, to fall in poverty - ընկնել աղքատության մեջ, money does not grow on trees - փողը ծառի վրա չի աճում, to be rolling in money - փողի մեջ լողալ, financial ruin - ֆինանսական համակարգի փլուզում, the sun would never set on American economy - Ամերիկայի տնտեսությունը երբեք մայրամուտ՝ ձգնաժամ չէր տեսնի, it acted as a brake for the economy's development - այն խոչընդոտեց, արգելակեց տնտեսության զարգացումը, his efforts bore fruit - նրա ջանքերն արդարացան/նա տեսավ իր ջանքերի/աշխատանքի պտուղները, արդյունքը, նա հաջողության հասավ, market supply/demand - շուկայական առաջարկ/պահանջարկ և այլն:

Հետևյալ փոխաբերություններն անգլերենից հայերեն թարգմանելիս անհրաժեշտ կլինի օգտվել բառարաններից, մասնագիտական գրականությունից՝ կիրառելով ավելի խորը, մասնագիտական գիտելիք կամ դիմել բացատ-

<sup>18</sup> Տե՛ս **McCloskey D.N.**, The Rhetoric of Economics, Economic Literature, XXI, 1983:

<sup>19</sup> Տե՛ս **Henderson W.**, Metaphor in Economics (Winter), 18, 1982, էջ 147-153:

<sup>20</sup> Տե՛ս **Boers F., Demecheleer M.**, A Few Metaphorical Models in Economic Discourse, ESP Journal, 1997:

րական թարգմանության՝ to be on easy street - բարենպաստ պայմաններում լինել, to own the ballpark - դրության տերը լինել, liquid assets - իրացվելիք ակտիվներ, the rate of unemployment picked up steam - գործազրկության տեմպերը մեծացան, the economy ran out of steam - տնտեսությունը անկարող եղավ մի բան անել, the burden of the poor - հասարակության աղքատ խավին սատարելու խնդիրը, to take a free ride on somebody's market purchase - անվճար օգտվել ինչ-որ մեկի՝ շուկայում կատարած գնումից, market power - ապրանքի կամ ծառայության շուկայական գինը փոխելու կարողություն, the South Sea Bubble - 10 տարի խաբեությամբ գործող բրիտանական բաժնետիրական ընկերություն՝ հիմնված 1710 թ. Հարավային Ամերիկայի հետ առևտրի մենաշնորհով առևտուր իրականացնելու համար, a bicycle shed effect - հեծանիվի ծածկի էֆեկտ (այսինքն՝ ժամանակի վատնում, երբ 10 միլիոն ֆունտ ստեռլինգ արժողությամբ ատոմակայանի հարցերը քննարկելու փոխարեն քննարկում են 350 ֆունտ ստեռլինգ արժողությամբ հեծանիվների ծածկը), the tax acts like Robin Hood - հարկը Ռոբին Հուդի նման է գործում (վերցնում է հարուստներից և տալիս աղքատներին) և այլն:

Որոշ դեպքերում միայն նկարագրական թարգմանությունն է կիրառվում: Այնպիսի փոխաբերական տերմիններ, ինչպիսիք են՝ monetary snake, a shark watcher, vulture fund, ծանոթ են միայն նեղ մասնագետներին (բացատրությունները տրված են Economy and Zoology հատվածում):

Կան նաև դեպքեր, երբ անզլերենում առկա փոխաբերականացման տարրը բացակայում է հայերեն համարժեքում, օրինակ՝ a slice of the profit pie - շահույթի մի մասը, market driven economy - շուկայական տնտեսություն և այլն: Հայերեն պարզապես չի հնչում «շահույթի կարկանդակի մի կտորը» կամ «շուկայով վարվող/առաջնորդվող տնտեսություն»:

Ամփոփելով՝ հարկ ենք համարում նշել, որ փոխաբերությունը, ներթափանցելով մեր մտածողություն, կողավորելով և փոխանցելով տեղեկույթ, ձևավորում է լեզվի հասկացութային դաշտը: Փոխաբերությունը բնորոշ չէ միայն գեղարվեստական ոճին: Ինչպես երևում է բերված օրինակներից, տնտեսագիտական տեքստերը հագեցած են փոխաբերություններով: Մենք վերացական տնտեսագիտական գաղափարները ընկալում ենք կոնկրետ գաղափարների միջոցով: Փոխաբերությունը ոչ միայն տնտեսագիտական տերմինների ստեղծման կարևորագույն աղբյուր է, այլև տնտեսագիտական տերմինների միջոցով լեզվի բառապաշարի հարստացման աղբյուր: Դառնալով բառապաշարի անբաժանելի մաս՝ տերմինը խոսքին հաղորդում է յուրահատուկ պատկերավորություն:

### Օգտագործված գրականություն

1. Արիստոտել, en.wikipedia.org/wiki/Metaphor:
2. Мельничук М.В., Осипова В.М., Метафора в англоязычном бизнес-дискурсе, Научный диалог, N11 (47), 2015.
3. Bicchieri C., Should a Scientist Abstain from Metaphor? Cambridge, Cambridge University Press, 1988.
4. Boers F., Demecheleer M., A Few Metaphorical Models in Economic Discourse, ESP Journal, 1997.
5. Cardini F.-E., Analysing English Metaphors of the Economic Crisis, University of Genoa, 2014.

6. Henderson W., Metaphor in Economics (Winter), 18, 1982.
7. Jue X., Economic Metaphors in English Newspapers, Kristianstad University College, The School of Teacher Education/English, 2009.
8. Kovecses Z., Metaphor: A Practical Introduction, Oxford, Oxford University Press, 2000.
9. Krugman P., Development, Geography and Economic Theory, London, Cambridge MA, 1995.
10. Lakoff G., Johnson M., Metaphor We Live By, Chicago University of Chicago Press, 1980.
11. Lakoff G., Johnson M., Metaphors We Live By, Chicago, University of Chicago Press, 2003.
12. Marshal A., The Principle of Economics, London, Macmillan and Co.Ltd., 1920.
13. McCloskey D.N., The Rhetoric of Economics, Economic Literature, XXI, 1983.
14. Ormerod P., The Death of Economics, Wiley John & Sons, London: Father and Faber, 1997.
15. Pamies A. & Ruiz R., Metaphors of Economy and Economy of Metaphors, University of Granada, Spain, 2017.

**СУСАННА ЧАЛАБЯН**

Доцент кафедры языков АГЭУ,  
кандидат филологических наук

**Метафора и некоторые проблемы ее перевода в текстах по экономике.**— В статье делается попытка применить современную теорию метафоры, предложенную Лакоффом и Джонсоном (1980 г.) и изучить ее употребление в экономической литературе. Метафора в экономике широко распространенное явление, т.к. она помогает понять одно явление (целевая сфера) посредством другого явления (сферы источника). Предлагается когнитивный анализ концептуальных метафор, относящихся к абстрактным экономическим концепциям. Выделенные метафорические выражения, которые классифицируются в группы в соответствии с различными сферам источника, к которым они принадлежат. Также рассматриваются некоторые вопросы, связанные с переводом метафорических выражений с английского на армянский.

**Ключевые слова:** метафора, концептуальная метафора, экономика, сфера источник, целевая сфера, методы перевода.

JEL: A2, A20

**SUSANNA CHALABYAN**

Associate Professor at the Chair of Languages  
at ASUE, PhD in Linguistics

**Metaphor and Some Issues of Its Translation in Texts on Economics.**— This paper attempts to apply the contemporary theory of metaphor proposed by Lakoff and Johnson (1980) to investigate its use in economic literature. Metaphor in economics is quite widespread as it helps understand one kind of thing (the target domain) in terms of another (the source domain). A cognitive analysis of conceptual metaphors dealing with abstract economic concepts is offered. Metaphorical expressions are selected and classified into groups in accordance with their different source domains they belong to. Some issues connected with the translation of metaphorical expressions from English into Armenian have also been taken into consideration.

**Key words:** metaphor, conceptual metaphors, economics, source domain, target domain, methods of translation.

JEL: A2, A20